




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

169

№ 2 «ՄԱՆԿԱԳԱՐԺԻ ԳՐԱԴԱՐԱՆ» № 2

ՊՐՈՖ. Ն. Մ ՊԱԿՐՈՎՍԿԻ

ՄԱՐՔՍԻԶՄԸ
ԴՊՐՈՑՈՒՄ

ԹԱՐԳՄ. Պ. ՀՈՎ. ՅԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԾՏԱՐԱՆԶՈՒԹՅՈՒՆ

18114 9րդ 1835 2017
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ. ԽՈՐՀՐԴ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

№ 2 «ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՐԱԴԱՐԱՆ» № 2

Պրոֆ. Ն. Մ. ՊԱԿՐՈՎՍԿԻ

ՄԱՐՔՍԻԶՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Թարգմ. Պ. Հովվյանի



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ—№ 220

ՅԵՐԵՎԱՆ—1925

ՄԱՐԶՍԻԶՄԸ I ՅԵՎ II ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Զեկուցման քեզերը

1. Մարքսիստական թեորիան մի վերացական ջրան չի և այն ել մատչելի միայն «մտավոր արխտո-կրատիային»։ մարքսիզմի առաջին նպատակն է բա-ցատրել կյանքը այնպես, ինչպես կա, այս պատճա-ռով ել այդ թեորիան պարզ է ինչպես ինքը կյանքը, և հաջող ձևի ընտրությամբ հնարավոր է բացատրել նույնիսկ 11—12 տարեկան յերեխաներին, նամանա-վանդ 13—16 տար. պատանիներին։

2. Մեր դպրոցական ծրագրներում ընդունված կոմպլեքսային սխտեմը չափազանց հեշտացնում է դասավանդումը մարքսիստական տեսակետով։ Այս սխտեմը շատ ու շատ է նպաստում, վոր կրթությու-նը մի վորոշ աշխարհայացք տարածելու միջոց դա-նա։ Ամեն մի դաս, ամեն տեսակ զրույց աշակերտների հետ, կոմպլեքսային սխտեմի միջոցով, կարող է տո-գորվել մարքսիստական աշխարհայացքով։

3. Մարքսիստական աշխարհայացքի. յերկու հիմնական գծերը՝ մատերիալիզմը և դիալեկտիկան չպետք է ցուցադրել միայն հասարակական յերևույթնե-րով։ Հայտնի յե, վոր Հեգելը համաշխարհային պրոցես-սի դիալեկտիկ ընթացքի ամենապարզ, հասկանալի ու հանրամատչելի որինակները առաջ էր բերում բնա-կան դիալեկտիկաների շրջանից։

Տիրած 5000

Պետրատի սուա չին տպարան վաղարձագատում



1-244691

4. Այս պատճառով ել ընադիտությունը պետք է ծառայի վորպես գլխավոր միջոց աշակերտների, մինչև անգամ 11—12 տարեկան աշակերտների գիտության մեջ մատերիալիստական հիմնական հասկացողություններ առաջ բերելու: Այս դեպքում ամենևին կարիք չկա թեորիան բացատրել վորպես թեորիա. յերեխաների համար այդ և ձանձրալի կլինի և անհասկանալի. բայց դասատվի ամեն մի կոնկրետ բացատրությունը, մինչև անգամ անդգալի կերպով պետք է աշակերտներին հասցնի այն յեզրակացության, թե աշխարհիս յերեսին կատարվող ամեն յերևույթ կարելի չէ բացատրել պարզ ու հասկանալի նյութական պատճառներով:

5. Դիալեկտիկայի մասին հասկացողություն տալու համար լավ յերևեստը կարող է լինել տիեզերքի ծագման պատմությունը. շատ նպատակահարմար է գրանով ցույց տալ յերեխաներին, թե ինչպես աշխարհիս յերեսին ամեն ինչ առաջանում է և վոչնչանում, դարձյալ պայմանավորված նյութական վորոշ պատճառներով:

6. Բնության յերևույթներից ավելի շատ հեշտ է անցնել գյուղատնտեսական յերևույթներին. գյուղատնտեսության կախումը նյութական պայմաններից շատ ավելի պարզ է ու ակնհայտ: Գյուղատնտեսության ձևերի փոփոխությունը մեզ հենակետ կտա բացատրելու նախ ընտանիքի և ապա հասարակական դասակարգերի դիալեկտիկան (ստրկություն, ճորտատիրություն, մշակություն, ֆերմերություն և խոշոր սեփականության ուրիշ համապատասխան ձևեր):

7. Հարմար է գյուղատնտեսությունից անցնել կապիտալի ծագման, սկսել առևտրական կապիտալից

և ապա անցնել արդյունաբերության ու կիսագյուղական արդյունաբերական շահագործման ձևերին (ընտանեկան արդյունաբերության սխտեմը), իսկ հետո բացատրել իսկական արդյունաբերական պրոլետարիատի ծագումը, խոշոր արդյունաբերությունը, բորսան, բանկերը, տնտեսական կապիտալը, իմպերիալիզմը: Դյուղատնտեսության, կոլեկտիվիզմի ամենապարզ որինակներով (ընդհանուր յերկրագործական գործիքներ, կենդանիներ և այլն) հեշտությամբ կարելի չէ գյուղատնտեսությունից անցնել սոցիալիզմի հասկացողության: Այս ընթացքը ցանկալի չէ վոչ միայն գյուղական զպրոցի համար, ուր շրջապատող բոլոր պայմանները այդ ճանապարհն են ցույց տալիս, այլև քաղաքի զպրոցի համար, վորովհետև հենց քաղաքի յերեսայի համար ել գյուղատնտեսությունը ավելի պարզ կոմպլեքս է, քան թե գործարանը կամ բանկը: Այս նպատակին կարող ենք հասնել եքսկլուսիաներով և ամառային գործնական աշխատանքներով գյուղում:

8. Ամենաբարդ ու դժվար խնդիրն այն է, քեի նչպես պետք է նյութական բազայից անցնենք վերնաշենքին: Այստեղ ել ամենալավ միջոցն է սկսել այն պարզագույն կապերից, վոր տալիս է կրոնը: Կրոնական հավատալիքներին պետք է մոտենանք յերկու ճանապարհով. նախ պետք է ցույց տանք, թե այդ հավատալիքները նյութական փաստերի քերի բացատրությունն են, վոր նախնական մարդու տգիտության արդյունք է (պետք է այս դեպքում առաջ բերենք այնպիսի փաստեր, վոր արդեն գիտական տեսակետից բացատրված և հասկանալի չեն յերեխաներին). յերկրորդ, պետք է բացատրենք, թե կրոնը շահագործման

դործիք և. և այս կապով կանցնենք ուղղակի տնտեսական յերևույթներին:

9. Այս բոլորի ամփոփումը, իհարկե, վոչ վորպես մի առանձին գլուխ, պետք է կազմեն յերկու հիմնական միտք, վոր նախորդ բացատրություններին հետ կարող են կրկնվել վորպես անբաժան վերջաբան: Առաջինն այն է, թե աշխարհի մատերիալիստական և դիալեկտիկական բացատրությունը նբա ամենապարզ ու հարմար բացատրությունն է, ամենագործնականը, վոր հնարավորություն է տալիս աշխատելու, դա մի թեորիա չէ, վոր ամենասերտ կերպով ձուլված է գործնականի հետ. և յերկրորդ, հենց այս պատճառով ել մատերիալիստական աշխարհայացքի հաղթանակը ձեռնտու ճիշահագործող դասակարգի համար, ուստի և այս աշխարհայացքը պաշտպանում է ամենից շատ ճշգրիտ ու շահագործված դասակարգը՝ պրոլետարիատը: Այս կետը մեր ամբողջ սխեման կապում է պրոլետարական հեղափոխության հետ, վորը ծրագրի ամբողջ հասարակագիտական բաժնի կենտրոնը պետք է լինի: Տեղին է ասել, թե մեր դպրոցական շինարարությունն անհրաժեշտ կարիքներից մեկն ել այն է, վոր կազմենք մանկական մի այնպիսի դասագիրք, վոր ի մեջ բոլոր մեկնությունները կենտրոնացած լինեն աշխատավորության ազատագրման պատմության շուրջը:

Ընկերներ, նախ և առաջ միքանի խոսք ասեմ այս թեզերի բացատրության շուրջը: Գուցե ձեզանից վրամաք այս թեզերն ընդունեն վորպես ուրույն մի ծրագիր կամ թե վորպես մի առանձին առարկայի ինքնուրույն ուսումնական պլան դպրոցական այն ծրագրերի ու պլանների շարքում, վոր հաստատված է

Պետ. Գիտ. Խորհ. կողմից I և II աստիճանի դպրոցի համար: Դա շատ մեծ մոլորություն կլիներ: Մարքսիզմն առանձին մի առանձին գիտություն ինկատի չունի, և, հաժանականաբար, դուք այդ լավ հասկանում եք, և վերջապես այժմ, ընդհանրապես, առանձին առարկաներ չկան, այլ գոյություն ունի դասավանդման կոմպլեքսային սխեմա: Իմ այս թեզերում, վոր հույս ունեմ, թե ամենքդ ունեք ձեռքներդ, աշխատել եմ ցույց տալ այն ընթացքը, բացատրության այն ճանապարհները, վորով պետք է առաջնորդվի կոմպլեքսային դասավանդությունը. և վորովհետև այդ ճանապարհին պետք է լինի մի վորոշ տրամաբանություն, պետք է լինի վորոշ աստիճանավորություն, դրա համար ել յես աշխատել եմ ցույց տալ այդ տրամաբանությունը, այսինքն մարքսիստական տեսակետը I և II աստիճանի դպրոցների ծրագրում: Այստեղ փաստերը խմբավորված են վորոշ կարգով և հաջորդականություն, բայց չպետք է հետևյալը դրանից, թե յես նպատակ եմ ունեցել աշակերտներին ծանոթացնել այդ փաստերի հետ հենց այդ կարգով ու հաջորդականություն, անկախ այն կոմպլեքսից, վոր մշակվում է: Ամենին: Ամեն մի կոմպլեքս պետք է ունենա գաղափարական բովանդակություն, անկախ այն հանդամանքից, թե ինչ է կոմպլեքսի նյութը՝ գյուղ, երկտրոֆիկացիա և այլն: Ամեն մի կոմպլեքս պետք է մոտենալ մի վորոշ տեսակետով, և հենց այս տեսակետն ել կհամենայի ձևակերպել:

Նախ անցնենք կոնկրետ մասին, վորը թեզերովը այնքան է պարզաբանված, վոր ինձ մնում է մի քանի թեթև մեկնություններ անել: Բայց այս մասին անցնելուց առաջ ուզում եմ խոսել, թե ընդհանրապես

ինչ նշանակութուն ունի մարքսիզմը մեր ընդհանուր-
կրթական դպրոցում: Այստեղ պետք է կարուկ ա-
սել, վոր այս տեսակետից մենք ստիպված կլինենք
շատ ավելի անողոք լինել ընդհանուր-կրթական դըպ-
րոցի նկատմամբ, քան թե բարձրագույն կրթակ. հաս-
տատություններում: Դուք կարող եք այս պարագոքս
համարել, բայց իրողությունն այս է և ուրիշ կերպ
եւ լինել չի կարող: Հավանականաբար դեռ յերկար
ժամանակ մարքսիստական տեսակետ չենք պահանջի
բարձրագույն դպրոցներում գործնական առարկաներ
ավանդող դասատուներից: Յեւ վերջապես նույնը
չե՞ արդյոք (այսինքն, իհարկե, միևնույնը չէ, կառար-
կեք դուք ինձ. և յես համաձայն եմ ձեզ): Բայց հարա-
բերական մտքով միթե նույն բանը չե՞, թե լավ քիմի-
կոսը միևնույն ժամանակ լավ մարքսիստ կլինի՞ թե վոչ:
Աչքի հիվանդությունները հռչակավոր պրոֆեսսոր Գա-
լավինը, ինչպես ասում են, «Ռուս ժողովրդի Միության»
անդամ եր և, գուցե թե, տոգորված եր այդ կոչմանը
հատուկ զգացմունքներով: Բայց և այնպես իր շրջա-
նում ամենաառաջին մասնագետն եր. և յեթե նրա
տեղը բերեյինք մի լավ մարքսիստ, բայց վատ ակ-
նաբույժ, և նրան կլինիկան հանձնեյինք, միայն վնա-
սակար հետևանքի կհասնեյինք: Նույնը պիտի ասել և
քիմիայի, շոգեկալիստների թեորիայի, թեթև տոկերի
թեորիայի և բոլոր նման գործնական առարկաների
նկատմամբ:

Այս գիտությունների ավանդումը բարձրագույն
դպրոցներում կատարել անպայման մարքսիստական
տեսակետով:

Բարձրագույն դպրոցներում մարքսիստական աշ-
խարհայացք կպահանջենք միայն տեսական գիտու-

թյուններ ավանդող դասատուներից և այդ պահանջը
պետք է առաջ տանենք մինչև վերջը: Առայժմ այս
գիծը մենք առաջ ենք տանում հասարակական գիտու-
թյունների շրջանում. բայց, իհարկե, սա մի գիշում
է մեր կողմից, հակատրամաբանական և վոչ բանավոր
գիշում, վոր վնասակար է գործի ելությանը, բայց
ստիպված ենք այդ գիշումն անել, պարզապես այն
պատճառով, վոր պետք է մի վորևէ բանից սկսել, և,
ինչ կուզեք ասեք, ներկա բարձրագույն դպրոցներում
ամենահետամնաց ու նեխած վիճակի մեջ հասարակա-
գիտական գիտություններն են: Բայց ֆիզիկայի, մա-
թեմատիկայի և բիոլոգիայի տեսական դասընթացքի
նկատմամբ եւ մենք մարքսիստական տեսակետ կպա-
հանջենք, վորովհետեւ այս շրջանում դասավանդման
այս կամ այն մեթոդը գունավորում է ուսանողների
աշխարհայացքը, իսկ ֆիզիկան ու մաթեմատիկան
կարելի չէ այնպիսի նպատակահարմար ձևով ավանդել,
վոր ուսանողների մեջ ուղղակի իդեալիստական
աշխարհայացք զարգանա: Պրոֆեսսոր Լ. Ս. Բերգը,
կարծեմ ակադեմիկ, ապացուցեց, վոր այդ լիովին հնա-
րավոր է նաև բիոլոգիայի շրջանում. կարելի չէ այն-
պես ավանդել, վոր կդաստիարակվեն ապագա իդեա-
լիստներ: Յեւ ուրեմն մարքսիստական տեսակետ կպա-
հանջենք բարձրագույն դպրոցներում տեսական գի-
տությունների նկատմամբ ու այսպիսով մեր կարմիր
պրոֆեսսորության Ինստիտուտը, բացի հասարակական
գիտություններից, կունենա նաև ընագիտության բա-
ժինը, վորովհետեւ չենք կարող մեր գաղափարական
հակառակորդների ձեռքին թողնել տեսական դիսցիպ-
լինները:

Մինչդեռ բարձրագույն դպրոցների նկատմամբ

մեծ զինուորներ ենք անում գործնական առարկաներ ավանդող դասատուներին ոգտին, I և II աստիճանի դըպրոցներում ստիպված չենք լինի այդ զինուորներն անելու և անել ել չի կարելի: Ինչպես վոր Վլադիմիր Իլյինն և վորակել իր մի հոգվածում, մարքսիզմը, վորի հիմքը կազմում և «մարտնչող մատերիալիզմը», մի ամբողջական աշխարհայացք և, ամեն տեսակետից հակառակ այն աշխարհայացքին, վորը մինչև այժմ տիրապետում եր մեր դպրոցում և վորը կարելի չէ վորակել վորպես կրոնական աշխարհայացք: Յեւ կրոնական եր իրոք այդ աշխարհայացքը, վորովհետև վոչ միայն կրոնի շրջանում, այլ և ամեն ուղղությամբ կույր հավատ եր արծարծում և մեռցնում հետախուզող վոգին: Կրոնի դեմ մղված պայքարը, հակակրոնական պրոպագանդը ընդհանուր սխտեմի մի մասն է կազմում միայն: Չե՞ վոր միապետության հիմքը հավատն եր, հավատ, թե այս անձը աստուծո ոճյալն է, ահա միապետության և կրոնի կապը, հավատ, թե այս ինչ անձը, կամ մարդկանց այս խումբը ամբողջ մի յերկրի տիրելու ընածին իրավունքն ունի և այլն: Այս վոգու, հնազանդության և կրոնական վոգու վրա յեր հիմնված հին դպրոցի ամբողջ աշխարհայացքը, և մենք գիտենք, վոր դեռ մինչև այսօր ել մասամբ շարունակում ե իր գոյությունը այդ վոգին մեր այժմյան դպրոցում: Տարրերնակ բան չե՞, վոր տրտատովում են Պուշկինի «ընտիր» վոտանավորները, և նրանց թվում չկան «Ազատությունները», «Գյուղը», չկա «Իշաշույնը», բայց կա «Ռուսաստանի դըպարտիչներին»: Այս գրքույկը լույս տեսավ 1922 կամ 1921 թվին. կարծեմ այս գրքույկն ել գործ է ածվում դպրոցում: Ահա մի որինակ, թե ինչպես հին, մեռած ուղղությունը մինչև այժմ ել

կենդանի հոսանքի առաջը կտրում ե, և մենք մինչև այսօր ել ստիպված ենք պայքարելու այս հին աշխարհայացքի դեմ, վոր հիմնված և ստրկության, հնազանդության և կույր հավատի վրա:

Այս աշխարհայացքի դեմ միայն բացասական միջոցներով պայքարելը բավական չե. չպետք և մեզ ապահով դեմքը, թե այդ աշխարհայացքը վտարել ենք դպրոցից: Յե՞ թե միայն դրանով բավականանանք, յերեխաներին կդարձնենք մի տեսակ վոտերականներ, վոր այժմ վոչ մի բանի պետք չե: Դրանք գործի ու աշխատանքի շատ քիչ ընդունակ են. վոտերականները կլասիկ ավարաներ ու ապիկար մարդիկ են: Յուցահանդիսում դրվելու մարդիկ են այս վոտերականները, վոր գիտեն միայն նստել փափուկ բազմութոռներին, սուրճ խմել, դրույց անել. ահա այն գործը, ընչին ընդունակ են ամեն տեսակ աշխարհայացքից ու ամեն հեռակետից դուրի այդ մարդիկ:

Բնավ չպետք և բավականանանք յերեխային հակալրոնական դարձնելով. այսպիսով մենք նրան կը դարձնենք մի բոլորովին անպետք աշխատող: Յերկյուղի ստրկության ու հարկադրանքի վրա հիմնված հին կրոնական աշխարհայացքի տեղ պետք և դնել մարտնչող կոմունիզմի ու մարքսիզմի աշխարհայացքը, վոր կույր հավատի և հպատակության վրա չե հիմնված, այլ ամեն յերեույթի համարձակ հետախուզության և դեպի մարդու կարողությունն ունեցած խորը հավատի վրա: Յես չեմ ուզում այնպիսի բառեր գործածել, վորով ինձ կարող են մեղադրել, թե մի նոր աստված եմ կանգնում: Բայց յեթե չքաշվենք տերմինոլոգիայից, կարելի չե ասել, թե մարքսիզմը ազատ մարդու կրոնն է, ազատված աշխատավորության կրոնը: Իհարկե,

սա կրոնն չե սովորական բառի իմաստով, վորովհետև այստեղ կույր հավատ չկա, և այս արտահայտութիւնը գործ դրի միայն վորպէս գրական մի անտիթեզ: Հին կրոնական աշխարհայացքին պետք է վրիպարինք մարքսիզմը, և ահա թե ինչու ընդհանուր-կրթական դպրոցի ամեն մի դասատու պարտավորված պետք է ներշնչված լինի այս նոր աշխարհայացքով, պարտավորված պետք է մարքսիստ լինի և նրան որինակ չպիտի լինեն ակնաբույժը, վրահաստ բժիշկը կամ քիմիկոսը: Այստեղ վոչ մի դիմում անել չենք կարող, բացի սովորական մարդկային զիջողութիւնից, վոր հատուկ է մարդկային թուլութեան: Բայց, իհարկե, չի կարելի պահանջել, վոր բոլոր դաստուռները հենց վաղը մարքսիստներ դառնան մի դեկրետով: Սա մեզ կհիշեցնէր Երեսուցիի «Խուլիո խուլերնիտո» հայտնի գրվածքի մեջ յեղած դեկրետները: Սակայն մենք պետք է նպատակ դնենք, վոր մանկավարժական բարձրագույն դպրոցները և մանկավարժական տեխնիկումները մարքսիստ ուսուցիչներ պատրաստեն. մեզ հարկավոր չեն վոչ-մարքսիստ ուսուցիչներ, վորովհետև դրանք կամ հին հոգու տեր ուսուցիչներ կլինեն, կամ թե դրանցից ամենալավները վերը հիշված մոլորեղաններից կլինեն, վորոնք ամենևին պետք չեն աշխատավոր դասակարգին, վորովհետև նրանք սկիստիցիզմից բացի ուրիշ վոչինչ չեն կարող տալ:

Ահա այն մարքսիզմը, վոր պետք է անցնեն դպրոցներում: Պետք է տեսնել, վոր մարքսիզմը, վոչ փրիլսոփայական, այլ դպրոցական մարքսիզմը շատ հաճախ խառնում են քաղաքական գրագիտութեան հետ, իսկ քաղաքական գրագիտութեան մասին գաղափար են կազմում կավալենկոյի, Վոլֆսոնի գրքերով և այլն:

Յեա ստիպված եմ նախ և առաջ վերացնել այն նախապաշարմունքը, թե մարքսիզմը քաղաքական գրագիտութեանն է: Քաղաքական գրագիտութեանը լավ բան է, և ցավալի յե, վոր մեր դպրոցներում լավ չի ավանդում. և շատ հաճախ, յերբ աշակերտներին հարցնում են, թե ով եր Լենինը, գիւղական դպրոցներում յերբեմն պատասխանում են, թե նա թագավոր եր: Սա շատ ցավալի յե և անհաճելի յե: Բայց և այնպէս, յեթե նույնիսկ կավալենկոյի ամբողջ իրքն անգիր անեն, դրանով նրանք մարքսիստներ չեն դառնա: Մարքսիզմը բոլոր շրջաններն ընդգրկող աշխարհայացք է, ամբողջական մի աշխարհայացք, վոր մենք հակադրում ենք կրոնական աշխարհայացքին: Այս պետք է միշտ հիշել և աչքաթող չանել վոչ մի բոպէ: Յեւ ահա թե ինչու մարքսիզմը յուրացնելու ընթացքում, սկզբնական շրջանում բնագիտութեանը հասարակական գիտութեաններից ավելի կարևոր նշանակութեան ունի: Մարքսի և Ենգելսի Խնստիտուտում ընկեր Ռյադանովը պահած ունի մի վերին աստիճանի սրտաշարժ փաստաթուղթ. դա յերկրաբանութեան վերաբերյալ մի գրքի կոնսպեկտն է, վոր կազմել է Կաբլ Մարքսը: Ի՞նչ եք կարծում, այս կոնսպեկտը յերբ և նա կազմել, յերբ յերիտասարդութեան միութեան անդամ եր:—Չե, կազմել է այս կոնսպեկտը 1880 թվին, յերբ նա 62 տարեկան եր: 62 տարեկան մեծ ծերունին, իր դարի ամենահաճաքեղ մարդկանցից մեկը ուսանողի բարեխղճութեամբ հաճառագրել է յերկրաբանութեան վերաբերյալ մի գիրք: Ակադեմիական տեսակետից (այժմ դա ծիծաղելի յե) վոր բուրժուական տնտեսագետը կուսուլմասիրի, կհետազոտի յերկրաբանութեան վերաբերյալ մի գիրք: Ընչին է պետք, ի՞նչ հարկավոր

ն: Յերբ յես մի անգամ սկսեցի բացատրել մի հարգելի ուսուցիչի պատմարանի պատմական մատերիալիզմը, և այդ դեռ այն ժամանակ, յերբ յես աշխատում էյի վորպես դասատու այս շենքում*, 25 տարի առաջ, նա ինձ լսեց, լսեց և բարձրաձայն ծիծաղեց. «Ընչի՞ն է պետք այդ, յես ուսումնասիրում եմ լիտվիական սեյմը, իսկ դուք խոսում եք նյութական գործոնների մասին. ինձ այդ հարկավոր չե՞ս: Տեսնում եք, վոր մասնագետները բոլորովին չեն հետաքրքրվում նույնիսկ իրենց առարկայի սահմաններում յեղած ընդհանրացումներով: Յեթե հետաքրքրվենք համալսարանի հասարակագիտական ինստիտուտներից մեկի աշխատանքներով, կտեսնենք, թե ինչպես մեր հարգելի բուրժուական գիտնականները (մեր ինստիտուտները դեռևս առաջնորդում են բուրժուական պրոֆեսսորներ) յետ են մղում իրանցից ամեն տեսակ ընդհանուր թեմաներ, յեթե վորևե մեկը փորձում է առաջադրել, և ինչպես ուղղակի լուրջում են յերանության մեջ, յերբ պատահում են մի այնպիսի թեմայի, վոր վոչ մի կապ չունի ժամանակակից կյանքի հետ: Այստեղ ամեն մի մանրամասնություն քամում են: Մի անգամ յերիտասարդներից մեկը այն միտքն արտահայտեց, թե ամեն մի լավ պատմաբանի աշխարհայացքի մեջ արտացոլում է ժամանակակից պայքարը. այս ինստիտուտի ավագ անդամներից մեկը պատասխանեց, թե դա պատմաբանի վոչ թե արժանիքն է, այլ դժբախտությունը: Իսկ յերբ մի ուրիշ յերիտասարդ ասաց, թե ամեն տեսակ հասարակա-

կան ցնցում, հեղափոխություն նոր տեսակետ է առաջ բերում պատմության մեջ, մի ուրիշ պատկանելի ձեր պրոֆեսսոր պատասխանեց, թե նոր տեսակետներ առաջ են գալիս պատմության մեջ վոչ թե հասարակական հեղաշրջումներով, այլ նոր աղբյուրներ հրապարակ դալուց հետո: Այսպիսով տեսնում եք, թե հին տկաղեմիկ գիտության տեսակետից մի կատարյալ տեսնութեություն է, վոր Կարլ Մարքսը 62 տարեկան հասակում պարապում եր յերկրաբանական մի գրքի համառոտագրությունով: Բայց այս ցույց է տալիս, վոր թեև Մարքսը այն ժամանակ հրաժարվում եր մարքսիստի կոչումից, վոր դանազան թեթևսովիկ մարդկանց հարձակումների նյութ եր դարձել, հենց այն ժամանակ նա իսկական մարքսիստ եր և հասկանում եր, թե մարքսիզմը միայն հասարակագիտություն չէ, այլ մի ամբողջական աշխարհայացք: Այս պատճառով ել մարքսիզմը պետք է սովորել դպրոցներում ամեն տեսակ հասարակագիտությունից շատ առաջ և ամենևին չպետք է շփոթել մարքսիզմը կավախնկոյի գրքի ուսումնասիրության հետ:

Թեղիսների մեջ ասացի, թե իմ կարծիքով մարքսիստական տեսակետի իրագործումը մեր դպրոցներում, վորպես աշխարհայացք, չափազանց հեշտա՛նում է կոմպլեքսային սխտեմով: Իմ մի ուրիշ գեղուցման մեջ, վորի սղագրությունը տպված է*, ուստի և ավելորդ է կրկնել, յես մարքսիստական կոմպլեքսավորման որինակներ եմ առաջ բերել նույնիսկ մասնագիտական գիտությունների շրջանից: Բայց և այնպես թույլ տվեք կրկնեմ այդ որինակներից մեկը:

* Այս համագումարը տեղի ունեցավ նոյեմբերի 25-ին Մեկիզավետի-յան ինստիտուտի շենքում, վորտեղ Մ. Ն. Պակրովսկին գլխավորելով յեր յեղ ախտեղից արտրվեց վորպես անդամներ:

* Տես ամսագիր «На путях к новой школе» 1924 թ., № 1:

Թվում է թե Ֆրանսիայի XIX դարի և XX դարի սկզբի ժողովրդատնտեսության և խոշոր արդյունաբերության զարգացումը զուտ հասարակագիտական խնդիր է, և այն բացատրելու համար, բացի հասարակական գործոններից, կարիք չենք ունենա ուրիշ ֆակտորների դիմելու: Այն ինչ յես արդեն ասել եմ, թե ինչով Ֆրանսիան դարձավ մետաղ-արդյունաբերական մի յերկիր, ինչով նա դարձավ յերկրորդ մետաղ-արդյունաբերական յերկիրը Յիվրոպայում և յերրորդը ամբողջ աշխարհում. ներկայումս Անգլիայից յետ ե մնում միայն չուգունի հալվածքով, տարեկան կես միլլիոն տոնն պակաս արդյունաբերելով: Ահա թե ինչը Ֆրանսիան դարձրեց մետաղ-արդյունաբերական յերկիր: Յեվ ինչպես դուք գիտեք, մետաղ-արդյունաբերական յերկիրը մեր ժամանակի տիպիկ արդյունաբերական յերկիրն է, վորովհետև մետաղ-արդյունաբերությունը խոշոր կապիտալիզմի արդյունաբերություն հիմքն է կազմում:

Ֆրանսիան այդ դրությունը հասավ Թոմասի և Խիլկրիստի քիմիական գյուտերի շնորհիվ անցյալ դարի 80-ական թվականներին: Առաջ Ֆրանսիացիք չեյին կարողանում հանքը դուրս մեծ քանակությամբ ֆոսֆորի լառնուրդ կար, և կարծում եյին, թե Ֆրանսիական հանքն անպետք է արդյունաբերության համար, չի մշակվում: Ֆրանս-պրուսական պատերազմից հետո 1870 թ. Իսամարկը զրկեց Ֆրանսիացիներին մաքուր հանքի վերջին հողաբաժնից, վոր այն ժամանակ անհրաժեշտ էր մետաղարդյունաբերության համար. համոզված եյին, թե արդեն վերջացավ Ֆրանսիայի մասնակցությունը համաշխարհային տնտեսության մեջ վորպես արդյունաբերական յերկիր: Բայց Թոմասը և

Խիլկրիստը այնպիսի միջոց գտան, վորով հնարավոր յեղավ հանքը ֆոսֆորից դուրս, և դրա շնորհիվ Ֆրանսիան դարձավ հանքերով ամենահարուստ յերկրներից մեկը: Այնուհետև ֆրանսիացիք անհաշիվ շատ հանքեր ունեցան, և Ֆրանսիան յերրորդ տեղը բռնեց Յիվրոպայում իր մետաղ-արդյունաբերությամբ ու, հավանականաբար, շուտով այդ ասպարեզում կգերազանցի Անգլիային: Յեվ, վերջին հաշվով տեսնում ենք, վոր տեխնիկական ֆակտորը վճռական նշանակություն ունի մի յերկրի վոչ միայն տնտեսականի, այլ և քաղաքականության համար: Ինչո՞ւ յե այդքան շահագրգռված Ֆրանսիան Ռուրի լանդերով, վորովհետև հանքը ածուխով են հալում: Ռուրի ամբողջ լանդիրը պատվում է ածուխի շուրջը, վորովհետև ածուխն անհրաժեշտ է հանքը մշակելու համար: Ահա դրանով է բացատրվում Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը, մինչդեռ բուն պատճառը զուտ քիմիական մի գյուտ է, վորի մասին յեթե տեղեկություն չունենանք, չենք կարող հասկանալ Ֆրանսիայի տնտեսականը: Այս որինակը ցույց է տալիս, թե մինչև ինչ աստիճանի հեռու կլինենք մարքսիզմից, յեթե միայն հետաքրքրվենք հասարակագիտությունով և ամենևին տեղեկություն չունենանք բնական գիտություններից: Այս անգիտությունը մեծ թերություն է, Աքիլլեսյան դարձապար ինքնուս մարքսիստների համար, վորոնք դժբախտություն են ունեցել ավարտել պատմա-լեզվաբանական և այլ ֆալստիֆիկոր: Մենք մի տեսակ կոնատ մարդիկ ենք. Երբ քսիմուսն հատու ջնադատությունը շարունակ նորմալ պատմական նեխած անկյուններն բաց անում ենք, ապա յեթե քաղաքականության մեջ: Իսկական մարքսիստը հաշտ առաջ պետք է լավ

1-24469



բնագետ լինի: Լիովին ճիշտ և Սվերդլովի համալսարանի ծրագիրը, ուր առաջին ամբողջ տարին և յերկրորդ տարվա առաջին կեսը համարյա թե բացառապես զբաղվում են բնական գիտություններով: Սա ամենաուղիղ մոտեցումն է, և միայն այս ճանապարհով կունենանք լավ մարքսիստներ:

Կատարելապես պարզ է, վոր դպրոցական մարքսիզմն ել պետք է սկսվի բնագիտությունից: Բնագիտությունը կարող է բացատրել մարքսիզմի յերկու հիմնական սկզբունքները՝ մատերիալիզմը և դիալեկտիկան: Սրանք այն յերկու կետ ձևներն են, վորոնց վրա կանգնած է ամբողջ մարքսիզմը: Վոչ յերեք կետ, այլ յերկու: Ինչ վերաբերում է մատերիալիզմին, կարիք չկա յերկար բացատրելու, վսր բնագիտությունը մարքսիստական մատերիալիզմի համար առաջնապես կարևոր մի պատվանդան է: Մատերիալիզմը աճել-զարգացել է հենց բնագիտության վրա հիմնված, և իզուր չէ յեկեղեցին այնքան համառ կռիվ մղել մատերիալիզմի դեմ: Ֆրանսիայում Նյուտոնի թեորիան արգելված էր նրա դրքույկը լույս տեսնելուց 100 տարի հետո, իհարկե, հեղափոխությունից առաջ: Յեկեղեցին համառորեն կռվում էր բնագիտության դեմ և իր տեսակետով ճիշտ էր վարվում, վորովհետև բնագիտությունը մատերիալիստական աշխարհայացքի հիմքն է: Միքիչ ավելի յերկար պետք է խոսել դիալեկտիկայի մասին: Մեր ժամանակակից բնագիտությունը մինչև այժմ ել շատ բնագիտական է (մետաֆիզիկական) և նա իր տեսությունները կառուցում է անշարժ փաստերի վրա, քան թե դիալեկտիկական շարժուն պրոցեսով: Բնագիտությունը դիալեկտիկացիայի յենթարկելու խնդիրը շատ վաղուց առաջադրել է Ենգելսը: Հեգելը, դիալեկ-

տիկ մեթոդի նախահայրը, իր որինակները վերցնում էր բնագիտությունից: Որինակ, նա վերցնում էր բույսի աճումը: Վորպեսզի բույս առաջ դա, անհրաժեշտ է, վոր սերմը պայթի, վոր նա վոչնչանա, այդ դեպքում միայն բույս առաջ կգա: Վորպեսզի պտուղ առաջ գա, պետք է ծաղիկը վոչնչանա, և այլն: Բոլոր յերևույթները առաջ են գալիս, անհետանում են, Դրանց տեղը նոր յերևույթներ են առաջ գալիս: Սհա դիալեկտիկայի գլխավոր առանցքը. յերբ մի յերևույթ անհետանում է, առաջանում է մի ուրիշը: Միևնույն րանը տեսնում ենք և քիմիայի մեջ. յերկու իրից գոյանում է մի յերրորդը, վորպես մի առանձին և ուրույն առարկա, բայց այդ դեպքում առաջին յերկուսն անհետանում են: Նույնն է և ֆիզիկայում: Այստեղ սովորաբար բերում են Կվանտի թեորիան: Բնագիտություն մեջ կգտնենք այսպիսի դիալեկտիկ պրոցեսներ մի ամբողջ շարք:

Ինչհետև դիալեկտիկան հասարակական տեսակետից կարևոր նշանակություն ունի: Վորովհետև նա արմատախիլ է անում այն ստրկական աշխարհայացքը, վոր դեռևս մնացել է բուրժուազիայի մեջ նսեմացած ձևով: Բուրժուազիան միշտ ապրել է կոմպրոմիսներով, կիսատ-պռատ գիշորություններով, և ահա տեսնում ենք, թե ինչպես կրոնական աշխարհայացքը իր եվուլյուցիայի ընթացքում առաջ է բերել մի տեսակ խառնուրդ, վոր եվուլյուցիայի բուրժուական թեորիան է: Դրա հյուսթյունն այն է, թե ամեն ինչ կատարվում է բնական ճանապարհով և բացատրվում է նյութական պատճառներով, բայց ամեն ինչ աճում է խաղաղ ու աստիճանաբար, մի յերևույթ վոխվում, դառնում է մի ուրիշ յերևույթ: Բուրժուական այս եվուլյուցիոնիզ-

մը տիրապետում եր մարդկանց գիտակցութեան մեջ ամբողջ XIX դարում (Լաւելի յերկրաբանական թեորիան): Տիեզերական պրոցեսսը նկարագրվում է վերապահանկատելի, մանր փոփոխութեաններէ մի շարք: Այս թեորիայէ ելլելով, եւ հետեւեալն է, թե, լավ, յեղեք մատերիալիստ միայն թե մի ապստամբք: Բայց դժբախտութեամբ այն է, վար իսկական մատերիալիզմը միշտ եւ ապստամբում է: Հեղ ու խոնարհ դարձնել այն անկարելի յե: Յեւ անա բուրժուական աշխարհայացքի մեջ դիւրեկտիկական հոսանք է առաջ դալիս Դարվինի՝ գոյութեան կովի թեորիայի շնորհիւ: Սա դիւրեկտիկայի շատ թույլ ձեւն է, բայց և այնպէս նա գոյութեան ունի բուրժուական աշխարհայացքի մեջ: Հետագայում դիւրեկտիկական հասնում է ամբողջ տիեզերական սիստեմի դուտ հեղափոխական ըմբռնումին: Մենք տեսնում ենք, վոր ամեն մի քայլը ձեռք է բերվում կովով. կովի հետեւանքն այն է լինում, վոր վոչընչանում է նախորդը, և նրա տեղը բռնում է նորը. սա յիւ վոչնչանալու յե, վոր տեղ տա հաջորդին: Մենք տեսնում ենք՝ ֆեոդալիզմը վոչնչանում է, նրա տեղը բռնում է կապիտալիզմը, բայց ինքը կապիտալիզմն եւ կվոչնչանա սոցիալիզմով: Ահա թե ինչու մեզ համար չափազանց կարեւոր նշանակութեան ունի, վոր յերեխաների գիտակցութեան մեջ հաստատվի տիեզերական պրոցեսսի դիւրեկտիկական այս ըմբռնումը: Այս ըմբռնումը հաստատելն ավելի դժվար խնդիր է, քան թե մատերիալիզմի մասին հասկացողութեան տալը, այդ պատճառով եւ, գուցե, ստիպված ենք ժամանակավոր վորոշ դիմում անելու: Լավ կլինի, յեթե մեր դպրոցը խիստ մատերիալիստական լինի, հենց այս հանգամանքն արդեն մի հաստատուն հիմք է ըս-

տեղծում: Պետք է հուսալ, վոր մտքերը դժվարութեամբ դրի առնող բանվորը այս դժվար խնդրին հաղթելու հնարավորութեան կունենա, քանի վոր կյանքի պայքարը նրան տալիս է կյանքի պրոցեսսի ճիշտ հասկացողութեան: Մենք գիտենք, վոր Սվերդլովի համալսարանի ուսանողը քաջվում է իր մտքերը թղթի վրա արտահայտել, բայց հաճախ նա հիանալի յուրացնում է ամենաբարդ թեորիաները, մինչդեռ հասարակագիտական ֆակուլտետի ուսանողն ուղղակի անդոր է դնում այդ դժվարութեան առաջը, չնայելով վոր նա ավարտել է յերկրորդ աստիճանի դպրոց, այն ինչ բանվորը կիսագրագետ է: Կյանքի պայքարը, ինքը կյանքը մեր փոքրիկ մատերիալիստներին դիւրեկտիկներ կպատրաստի: Բայց այս դիմումը վոչ մի դեպքում չի կարող սկզբունքային լինել: Ձեռք կարող թույլ տալ ընդմիշտ, վոր պատմութեանը և կյանքը կատարեն վերջացնեն մեր աշխատանքը. սա անթույլատրելի յե: Դպրոցը պետք է տա ըստ ամենայնի կյանքի համար պատրաստված մարդիկ, չպետք է խուսափի մեր առաջը դրված դժվար խնդրից և այն թողնի կյանքին:

Ահա ինչու յես կարծում եմ, թե դպրոցում պետք է պարապել նաեւ դիւրեկտիկայով: Պետք է շեշտեմ նույն միտքը, ինչ վոր ասել եմ թեդիսներում, այսինքն, թե անմտութեան կլինեն, իհարկե, այս ամենը բացատրել յերեխաներին վերացական տեսութեան ձևով, վորովհետեւ դրանից յերկու վատ հետեւանք առաջ կդա. 1, յերեխաները այդ չեն հասկանա. յերկրորդ, այնպիսի վերաբերմունք ցույց կտան, ինչպիսի վերաբերվում էին կրօնին: Ձե վոր անցյալում ամեն մի աշակերտ ասում էր, թե հավատո հանգանակն այնպիսի բան է, վոր չի կարելի հասկանալ, պետք է այն ան-

գիր անել: Ահա թե ինչու դիտելի էր իր կարելի
բացատրել վորպես վերացական թեորիա, վորովհետեւ
հետեւանքը չափազանց վատ կլինի: Յեւ այս ասում
եմ, վորովհետեւ նման դեպք տեղի չե ունեցել դպրոց-
ներում, թեպետ, ճիշտ ե, վոչ որինակելի-վործնական
դպրոցներում: Բարեբախտաբար մարքսիզմը չեն ան-
գիր անում, բայց վոր կալվալենկոյի գրքույկը սովո-
րում են կրոնի պես, այդ փաստ ե: Սա բոլորովին
սխալ մոտեցում ե և ամենին պետք չե: Կրկնում եմ,
վոր դասավանդության ամբողջ կոմպլեքսը պետք ե
տողորված լինի մարքսիզմով, և այստեղ ուսուցչի շը-
նորհքը մեծ դեր ե խաղալու, վոր նա կարողանա ամեն
մի փաստից դիտելի տրեկական դաս ստեղծել: Ինկատի
ունեցեք բուսաբանությունը և հիշեցեք այն որինակը,
վոր Հեգելն և առաջ բերում: Այդ ամենը տարրական
են. յերեխաները վոչ մի թեորիա չեն լսել, բայց դիտ-
ելի տրեկական մտածելու վարժություն և ունակություն
ունեն: Իմ կարծիքով դիտելի տրեկական յերեխաների գի-
տակցության մեջ հաստատելու ամենալավ միջոցը
տիեզերքի ծագման պատմությունն ե, սա ընդհան-
րապես դաստիարակող մի առարկա չե:

Մարքսիզմը մի ամբողջական աշխարհայացք ե,
վորի մեջ բնագիտությունը ձուլված ե հասարակագի-
տության հետ: Ինչպես անենք, վորպեսզի առաջ չգա
այն բաժանումը, վոր դժբախտաբար կա հին դպրոցի
մարդկանց, այսինքն մեր մեջ: Հին դպրոցի մարդիկ
յերկու արկղ ունեն. մեկի մեջ բնագիտությունն ե,
մյուսի մեջ հասարակագիտությունը: Յեւ իմ թեզիս-
ների մեջ աշխատում եմ ցույց տալ այն ճանապարհը,
թե ինչպես բնագիտությունից անցնենք հասարակա-
գիտության. այդ միջոցը գյուղատնտեսության յե-

րևութներն են: Ինձ թվում ե, թե սա ամենապարզ մի-
ջոցն ե: Յեւ անձամբ չեմ կարողացել այդ ճանապար-
հով առաջ գնալ, վորովհետեւ հին դպրոցում եյի դասա-
վանդում և առարկայական սխտեմով, բայց պետք ե
ասեմ, վոր կարողացել եմ աշակերտների գիտակցու-
թյան մեջ զարթեցնել պատմության մարքսիստական
ըմբռնումը. սակայն վոչ յերեխաների, այլ ավելի հա-
սակավորների հետ եմ պարապել, 13 տարեկան պա-
տանիներ հետ, և նրանք շատ լավ եյին ըմբռնում այս:
Յեւ այդպես ավանդել եմ այս դպրոցական հաստա-
տության շենքի մեջ վոչ թե այժմ, յերբ այս դպրոցը
գոյություն ունի Ռադիշչևի անունով, այլ այն ժամա-
նակ, յերբ դեռ ինստիտուտ եր, և վորտեղից ինձ քչե-
ցին վորպես անբարեհույս մարդու ուղիղ 25 տարի ա-
ռաջ: Այստեղ ավանդում եյի պատմական մատերիա-
լիզմը ավելի հասակավոր սերնդի, համարյա հասուն
աղջիկների, և վստահացնում եմ, վոր նրանք այդ
հասկանում եյին: Աշխատանքը առաջ եյի տանում վոչ
մեքենայորեն, այլ ակտիվ ձևով. ստիպում եյի նրանց
շարադրություններ գրել. ապացույցներ ունեմ, վոր
դասարանի ուժեղ մասը յուրացրել ե պատմական մա-
տերիալիզմի հիմնական հասկացողությունները: Մի
խոսքով՝ յես փորձ ունեմ, և իմ փորձը շատ ավելի վստա-
հելի չե, վորովհետեւ կատարվում եր ամենամանապատ
պայմանների մեջ, վորտեղ հազար տեսակ իշխանու-
թյուն վոչ միայն չեյին ոգնում ինձ, այլ և խանդարում
եյին: Ինձ մոտ գալիս եյին պատվավոր հոգաբարձուներ
հասարակական համագեեստներով և բարձրաստիճան
տիկիներ, լսում եյին դասերս, և յես ստիպված եյի
լինում զգալի կերպով պատեպատ ընկնել, վորպեսզի
այսպիսի այցելուներին ներկայությամբ ել կարողանամ

պատմութիւնը բացատրել մատերիալիստական տեսակետից: Հիշում եմ՝ մի անգամ դասիս ներկա յեր այս դպրոցական հաստատութեան մեծավորը՝ հոստար Ուսուֆյէը. լսում եր դասս, յերբ բացատրում էյի, թե ճորտատիրութեան անկումը տնտեսական պայմանների հետեանք եր, նա շատ ազդու և խորհրդավոր կերպով բացականչեց. «Լավ ե...»: Տեսնում եք, վոր այն ժամանակ ստիպված էյինք աշխատել ծայրահեղ անընդատ պայմանների մեջ, բայց և այնպես վորոշ մանկավարժական արդյունքի հասնում էյինք, ուստի և հաստատ հավատացած եմ, ընկերներ, վոր ներկա պայմաններում ավելի հեշտ ե հասնել այդ արդյունքին:

Յերկար չեմ խոսի այս թեմայի մասին. թեղիսներին մեջ կա այս կետը. բայց կրկնում եմ, հավատացած եմ, թե ընագիտութեան և հասարակագիտութեան ամենաբնական կապը, ամենապարզ ու գործնական կապը գոյությունտեսութիւնն ե, վորովհետեւ գոյութեան տեսութեան հիմքը ընագիտութիւնն ե, և ուրիշ հիմք լինել չի կարող: Ստիպված ենք յերկար խոսել այս կապի մասին, վորովհետեւ նա մեր առջև մի շարք ճանապարհներ բաց կանի: Որինակ՝ վերցնենք կուլտուրայի պատմութիւնը, վոր իսկապես յերեք ընդարձակ շրջանի յե բաժանվում: Առաջինն այն շրջանն ե, յերբ գոյութիւնն չունէր արդէ յերկրագործութիւնը, այսինքն չկար գութանավորը, այլ վարում էյին ձեռքով՝ բրինձերով ու թորխերով, և այդ միջոցը, ինչպես հայտնի յե, ներկայումս վերածնվել և Ռուսաստանի միջանի տեղերում. այժմ այդ տեղերում հողը մշակում են թորխերով: Սա առաջին ընդարձակ շրջանն ե, վոր հաշվում են յեթի վոչ հարյուրավոր, դոնէ տասնյակ հազարավոր տարիներ: Յերկրորդը այն շրջանն ե,

յերբ սկսվում ե գութանավորը: Այս շրջանում յերեւում ե չափազանց հետաքրքիր կուլտուրա, դարմանալու չափ միակերպ հազարավոր տարիների ընթացքում: Վերցընենք որինակ իդեական կուլտուրան, յերբ մինչև անգամ պալատական կանայք հագնվում էյին XIX դարի վերջին ապրող կանանց շատ նման: Իդուր չե, վոր հզեական ամենանշանավոր անդրին այժմ «պարիզեցի կին» ե կոչվում: Շրջագրեալը դանդաղաձև, թեքը ծալքերով, ճիշտ ու ճիշտ այնպես, ինչպես հագնվում էյին 1880-ական թվականներին. իսկ չե՞ վոր այդ յեղել ե առնվազն 5,000 տարի առաջ: Վերցնենք ասորաբաբելական քաղաքակրթութիւնը: Մտեք բրիտանական թանգարանը և այնտեղ կտեսնեք գույնզգույն կետերով ծածկված փոքրիկ աղյուսներ: Ի՞նչ բաներ են այդ աղյուսները. — պարտամուրհակներ, ստացականներ, վոր պետք ե վճարել սրան կամ նրան, պետք ե վճարել այսքան «մին»: Այսպիսով ուրեմն տեսնում ենք, վոր դրամական տնտեսութիւնն ու պարտամուրհակները գոյութիւն են ունեցել նաև Բաբելոնում 5-6 հազար տարի առաջ: Ճիշտ նույն կուլտուրան, առևտրական կապիտալի կուլտուրան պարտամուրհակներով, պալատական տիկիներով ու պալատներով գոյութիւն ունէր և Ֆրանսիայում XVII դարի վերջը, Լյուդովիկ XIV-ի որով, այսինքն, ընդամենը 200-250 տարի առաջ: Այս նոր յերկրագործական կուլտուրան, նոր վարելաձևը այն հիմքն ե կազմում, վորի վրա հաստատվում ե կուլտուրական մի ընդարձակ ժամանակամիջոց, վոր ընդգրկում ե աշխարհագրական ու ժամանակագրական ընդարձակ շրջան, և այդ կուլտուրան դուք գտնում եք և Ամերիկայում և հին Մեքսիկայում, հին Պերուում, Չինաստանում և Հնդկաստանում: Այս տեղերն ել դուք

դտնում եք միևնույն պալատական կյանքը, նույն պալատական պաշտոնեյությունը, նույն ճորտատիրությունն ինարկե, նույն պապենական ժառանգական տնտեսությունը և այլն և այլն: Այս ամենը ամեն տեղ նույնն է:

Վերջապես յերրորդ շրջանը մեր ժամանակի հսկայական հեղափոխության շրջանն է, մեքենաների գործածության և խոշոր արդյունաբերության յերևան գալու շրջանը: Յեւ այդ բոլորը տեղի յե ունեցել ընդամենը մի 200 տարի առաջ, այսինքն XVIII դարում, յերբ ամբողջ աշխարհը նորից տակն ու վրա յի լինում, և հրապարակ են գալիս կուլտուրայի նոր ձևեր, բոլորովին տարբեր թե նախնական և թե յերկրորդ շրջանից: Ինչպես տեսնում եք, ամբողջ պրոցեսը չափազանց սերտ կերպով կապված է գյուղատնտեսության հետ: Գութանի հետ կապված յեղան ու ձիու յերևալը պատմության ընթացքում խոշոր պատմական հեղաշրջում էր: Ահա թե ինչու գյուղատնտեսությունը համարում էմ ամեն տեսակետից շատ հարմար միացնող կապ, վորով Վոչ միայն կարող ենք բնագիտությունը միացնել տնտեսականի հետ, այլ և կբացատրենք կուլտուրայի ամբողջ պատմությունը: Բավական յերկար ժամանակաշրջան, մինչև Ռուսաստանում գոյություն ունեցող ճորտատիրական շրջանի վերջը, այսինքն մինչև XIX դարի կեսը յերկրագործությամբ լիովին կարելի յե բավականանալ պատմական և պատմա-կուլտուրական յերևութիւնները բացատրելու համար:

Բայց յերբ սկսվում է մեքենաների դարը, յերկրագործությունը բավարար միջոց չէ: Այդ ժամանակ հրապարակ է գալիս արդյունաբերության մոմենտը, արդյունագործության (ինդուստրիայի) մոմենտը, և այդ մոմենտները պետք է կապել: Հետագայում ամենա-

դժվար խնդիրը կլինի հիմքից վերնաշենքին անցնելը, այսինքն իդեոլոգիայի բացատրությունը: Այստեղ մենք մոտենում ենք դպրոցական կյանքի մեջ չափազանց կարևոր նշանակություն ունեցող խնդրին, մոտենում ենք կրոնին: Ամեն տեսակ կասկածից դուրս է, վոր յուրաքանչյուր խորհրդային մանկավարժի պարտականությունն է կռիվ մղել կրոնի դեմ, քանի գոյություն ունեն կրոնն ու կրոնական հասկացողությունը, վոր հին աշխարհայացքի հիմքն են կազմում: Բայց լուրջ խնդիր է, թե ինչպես պետք է այդ կռիվն առաջ տանել: Անկասկած, այնքան էլ հարմար չէ միանգամից վրա տալը, թեև գյուղում լավ է գործադրվում: Անմիջական հարձակումը կայանում է նրանում, վոր մերկացնում ենք տիրապետող կրոնի արտաքին, զուտ արտաքին ձևերը: Այսպիսի ձևով կատարված հարձակումը զորեղ է ու կտրուկ, և դրանով պետք է բացատրել, վոր «Безбожник»-ը գյուղում կարգացվելուց հետո յիլ չի կարելի ճանաչել Վոչ նրա բնագիրը և Վոչ էլ նրա մեջ յեղած պատկերները. մինչև անգամ այդ գիրքն անցնում է նաև արտասահման, վորտեղ նույնպես ընդունելություն է գտնում: «Безбожник»-ը մեծ քանակությամբ անցնում է Գերմանիա, այնտեղ ժողովուրդը սովոր չի այսպիսի բաց ու համարձակ վերաբերմունքի դեպի կրոնը, այնտեղ դեռևս պատտրն իր ձեռքում է պահում ծխականներին, այդ պատճառով էլ այս միջոցը շատ զորեղ ազդեցություն է գործում: Այս մոտեցումը լավ է, վորպես նախնական պայքարի միջոց, բայց չպետք է մոռանալ, վոր սա միայն նախնական պայքարի միջոց է և պետք է մեծ զգուշությամբ գործադրել, վորովհետև յեթե այդ միջոցը շատ կոպիտ կերպով առաջ տանենք,

անսպասելի հետեանքների կարող ենք հասնել: Պետք է չափազանց մեծ զգուշություն ձեռք առնել և չպետք է մոռանալ, վոր այդ միայն նախնական միջոց է, վորովհետև պատահում է և այսպիսի բան. դուք մերկացնում եք այս ինչ մարդու առաջ տերտերին, և նա այլևս նրան չի հավատում, մերկացնում եք մասունքները նրա առաջ, նա համոզվում է, վոր դա լոկ խաբեբայություն է, իսկ յերկու տարուց հետո այդ մարդը դառնում է բապտիստ: Այն, լինում են այսպիսի անեկդոտներ, վորովհետև կրոնական աշխարհայացքի արմատները շատ ավելի խորն են թաղված, քան թե կրոնի արտաքին կողմերը, հրաշքներն ու ամեն տեսակ մասունքները: Այս պատճառով ել պետք է հասնել այդ արմատներին և չբավականանալ կրոնական ձևերի արտաքին կողմերի մակերևութային վարկաբեկումով:

Այդ արմատներին հասնելու յերկու ճանապարհ կա: Առաջին ճանապարհը շատ հեշտ է կապել դպրոցական ամբողջ դասավանդության հետ: Իմ կարծիքով, ով չի կարողանում այդ անել, նա լավ ուսուցիչ չէ... Այս ել դարձյալ նույն բնագիտությունն է: Յեթն յերեսաներին բացատրենք այս կամ այն բնական յերևույթը կենդանի օրինակով և գիտական ձևով, իսկ հետո այդ նույն յերևույթը բացատրենք այնպես, ինչպես վոր հասկանում էին վայրենիները, և կամ թե ինչպես վոր բացատրում է ներկայումս խավար ժողովուրդը, յերեսաները ահամա կբրջան, իհարկե, յեթե կարող եք, ինչպես հարկն է, այդ պատմել: Կրոնական աշխարհայացքը վարկաբեկելու ամենալավ միջոցն այս է: Այս կարելի չէ ցուց տալ մի շարք կոնկրետ օրինակներով: Ընկեր Յակովլևի գլուղի մասին գրած գրքույկի մեջ կա մի ինքնաստեղծ անասոված մարդու շատ հետաքրքիր

օրինակ. այս մարդն իր հավատը կորցրել է Գերմանիայում գերի յեղած ժամանակ: Ինչպես ձեզ հայտնի չէ, գերմանացիները պատերազմի ժամանակ մեծ յեռանդով վոչնչացնում էին վոջիները, և շատ խելոք էյին վարվում. հետո Խորհրդային Ռուսաստանն էլ ստիպված եր կռիվ մղել վոջիների դեմ: Յերբ այս մարդը իմացավ, թե բռավոր տիֆը, այդ սոսկալի հիվանդությունը, վոր հարյուրավոր մարդիկ է հնձում, տարածվում է վոջիներով և վոր յեթե մարդիկ կովեն վոջիների դեմ, բռավոր տիֆով չեն հիվանդանա, այդ օրվանից նա կորցրեց իր հավատը: Ել ինչո՞ւ աստծուն աղոթել, ինչո՞ւ մաղթանքներ ու թափոններ անել առողջանալու համար, քանի վոր այդ նպատակին հասնում ենք վոջիները վոչնչացնելով. ուրեմն ավելի հեշտ ճանապարհ կա: Իհարկե, պարզ է, վոր այդ միջոցին այդ մարդը այս խնդրի մասին խոսել է ավելի կրթված, համենայն դեպ, ավելի գրագետ մարդկանց հետ: Իսկ յեթե նա Բերլինում մտավ կենդանաբանական թանգարանը այդ զրույցների ու մտորումների ազդեցության տակ, կապիկը նրան շատ ապշեցրեց. շատ եր մարդու նման... Վերջիվերջո նա գերությունից վերադարձավ վորպես մի գիտակցաբար անհավատ մարդ: Նա վոչ միայն չեր հավատում մասունքներին, պատերին, այլ ընդհանրապես թողեց կրոնական աշխարհայացքը: Նա սկսեց կարգալ գիտական գրքեր, սկսեց հետաքրքրվել գիտական խնդիրներով:

Այս ինքնաստեղծ անասոված մարդու օրինակը պարզ ցույց է տալիս, թե ինչպես բնական ճանապարհով կարելի չէ կովել կրոնական աշխարհայացքի դեմ: Նույն Յակովլևը առաջ է բերում մի ուրիշ շատ լավ օրինակ, բայց մանկավարժական տեսակետից քիչ ոգ-

տադրեց՝ Դա կորեկի կռիվն է մկների դեմ կամ մկների կռիվը կորեկի դեմ: Մկները կորեկն ուտում են. ինչպես աղատվենք նրանցից: Շատ հասարակ միջոցով: Կորեկը պետք է լվանալ ֆորմալինով. մկները, վոր ֆորմալինի հոտը տանել չեն կարողանում, չեն մոտենա կորեկին: Բայց գյուղացիք դեռ մինչև այսօր ել թափոռներ են կատարում, տերտեր կանչում մկներին արշավանքից աղատվելու համար, մինչդեռ հեշտ միջոցն այն է, վոր պետք է կորեկը ֆորմալինով լվանալ, և մուկ չի լինի. ել թափոռի ու տերտերի կարիք չի լինի: Այս որինալն ել հիսնալի կերպով ցույց է տալիս, թե ինչպես պետք է կռվել կրոնական աշխարհայացքի դեմ: Իհարկե, ինդուստրիան ավելի ազդեցիկ միջոց է կրոնի դեմ մղվող կռվի համար: Աչքի առաջ ունենանք ընկեր Ստեպանովի բերած որինալը. յերբ կենդանիները հիվանդանում են, աղոթք են անում, խուսկ են ծխում և այլն, իսկ յեթե կոտրվում է տրամվայի վագոնը, վոչ վոք տերտեր չի կանչում աղոթք անելու, վոչ վոք խուսկ չի ծխում, վոր այդ վագոնը նորոգվի: Ծիծաղելի յե, իհարկե, և նման դեպք չի յեղել յերբեք: Հասկանալի յե, վոր այսպիսի դեպքում պետք է վարպետ կանչել և նորոգել տալ վագոնը: Այս հասկանում են ամենքը, մինչև անգամ մուկ գյուղացին:

Բայց, ընկերներ, այս ամենը դեռ բավական չէ: Կրոնը լուկ աշխարհայացք չէ, թեկուզ հենց սխալ աշխարհայացք, վոր կարողանայինք ասել, թե մարդիկ մինչև այժմ մոլորված եյին, իսկ այժմ թողել են իրենց մոլորությունը: Այդպես թեթև կերպով չի կարելի վերաբերվել կրոնին: Յեթե կրոնը լուկ բնական մի հասկացողություն լիներ, վաղուց արդեն լայն չա-

փով տեղի տված կլիներ այն բուրժուական եվոլյուցիոնիզմին, վորի մասին խոսեցի արդեն, վորպես անցողական մի թեորիայի: Բայց իրոք այդպես չէ: Իրականությունը ցույց է տալիս, վոր կրոնի ձեռքին դերի յեն մինչև անգամ քաղաքակրթված լայն մասաները, ինչպես, որինալ, Գերմանիայում: Այնտեղ մոտիկ անցյալում այսպիսի մի դեպք տեղի ունեցավ բավական հայտնի ինժեներ Արկոն դատի յենթարկվեց նրա համար, վոր շատ համարձակ աթեիստական մի դասախոսություն եր կարդացել: Ուշադրություն առեք, վոր այդ դեպքը տեղի ունեցավ հեղափոխությունից հետո, բայց և այնպես իրողությունը այդ եր: Նրան դատեցին և դատապարտեցին շատ թեթև պատժի, մի փոքրիկ տուգանքի, բայց նշանակալից է, վոր նման դեպքեր կարող եյին տեղի ունենալ հեղափոխություն ապրած մի յերկրում: Մոտիկ անցյալում, մի 50 տարի առաջ Անգլիայում աթեիստները չեյին կարող պարլամենտին անդամ լինել: Միայն 80-ական թվականներին մենտի անգամ լինել: Միայն 80-ական թվականներին աթեիստներն իրավունք ձեռք բերին պարլամենտ մըտնելու. ուրեմն պարզ է, վոր այդ յերկրում աթեիստների իրավունքները սահմանափակված եյին: Այս յերևույթը միանգամայն համապատասխանում է անգլիական դեմոկրատիայի վոգոն: Այժմ ել, ինչպես գիտենք, Մակդոնալդը թեև թափոռներ չի անում, համեպ այն դեպս բարոգներ է կարգում. այս ել շատ սաղական է անգլիական դեմոկրատիային:

Այսպիսով, չնայած բնագիտությունը բոլոր հանդուրություններին, կրոնը մինչև որս ել դիմանում է, կա, միմիայն այն պատճառով, վորովհետև նա վոմանց և ինչ վոր բաների համար հարկավոր է: Յեթե նա վոչ վոքի պետք չլիներ, ընագիտությունը վաղուց,

շատ վաղուց նրան վոչնչացրած կլինեիր: Մինչդեռ այժմ ել կրոնը շահագործութեան ամենակարեւոր լծակներէց մեկն է: Յեւ ինչ այս կետի վերաբերյալ կրոնի ներկայացուցիչներէ, բարեպաշտ մարդկանց գործություններում առատ նյութ կգտնենք: Յիս իմ «Կուլտուրայի պատմութեան ուրվագծեր» աշխատութեան մեջ աշխատել եմ համառոտ կերպով (այս պիտի ընդհանրապես համառոտադրութիւն է) նկարագրել ուսական վանքերը Յոհան Ահելի և XVI դարի ուս քարոզիչներէ խոսքերով: Յիս առաջ եմ բերել միայն յերկու-յերեք փոքրիկ որինական, բայց ուրիշ պատմական աշխատութիւններէ մեջ, պատմական գրականութեան մեջ, ինչպես, որինակ, Պավլովի «Ռուսաստանի յեկեղեցական հողատիրութեան պատմութիւնը» գրվածքի մեջ կան գեղեցիկ ու ընտիր կտորներ, վոր բովանդակ է հենց այժմյան լեզվով պատմենք զպրոցներում, և յերեսաներն առանց ծիծաղելու չեն կարող անցնել վորեն վանքի մոտով: Միայն թե հարգելով յերեսայի հասակը, պետք կլինի մեղմացնել վորոշ արտահայտութիւններ, վորովհետեւ այն ժամանակվա քարոզիչներն իրենց արտահայտութիւններով շատ բեաւոյտ ելին: Որինական կգտնենք նաեւ ամեն մի բանակովի մեջ. հիանալի որինական կան կալվինիստներէ և կաթոլիկներէ վեճերի մեջ: Վերցրեք Լորանի գիրքը՝ «Մարդկութեան պատմութեան ուրվագծերը». յիս չեմ գովում և առաջարկում այդ գիրքը, այլ հիշում եմ միայն: Նա այս գրքի մեջ կաթոլիկ յեկեղեցու մասին որինականի այնպիսի կոմպլեքս է առաջ բերում, վորի նմանը դուք յերեք չեք տեսել: Այդ գիրքը կարդացվում է ինչպես վեպ, անեկդոտային վեպ, կարդացվում է ինչպես Բոկկաչիոն, և այս բոլորը փաստաթղթեր են: Այս-

տեղ կրոնի վերաբերյալ շատ նյութ կա, վորպես մասսաները շահագործող մի սխտեմի, այստեղ նույնիսկ տեսնում եք տերտերին վորպես կալվածատիրոջ ագիտատորի և այլն և այլն. կարելի յի շատ մանրամասնութիւններ առաջ բերել:

Վորքան կարողացա, այս որինականներով բացատրեցի, թե ինչ է նշանակում մարքսիզմը զպրոցում և թե ինչ ընթացքով պետք է մոտենալ այդ խնդրի լուծմանը, վոր մարքսիզմը առաջ տանենք զպրոցում. այժմ այս բոլոր ասածներէցս հետո հերթը գալիս է Կավալինկոյին, չակերտներով: Յիս անմիջապես Կավալինկոն չեմ առաջարկում, բայց ամեն ինչ պետք է վերջանա այն հսկայական հեղաշրջման բացատրութիւնով, վոր հնարավորութիւն տվեց մարդկանց յուրացնելու գիտական աշխարհայացքը, և այստեղ շատ կարեւոր է, վոր կարողանանք մարքսիզմը կապել աշխատավորութեան աշխարհայացքի հետ:

Այս անելը բավական հեշտ է: Իմ մեջ համոզմունք է դոյացել, թե հասարակական յերեւոյթներին մատերիալիստական տեսակետով մերձեցումը հատուկ է աշխատավոր դասակարգերին, և այս լիովին հասկանալի յի: Ի՞նչ բան է պատմութեան իդեալիստական բացատրութիւնը: Գաղափարը անկշիռ, վերացական մի բան է, հին աստծու նման մի բան, վոր չես կարող բռնել: Գաղափարն արտահայտվում է բառերով, և բառերի գաղափարական ըմբռնումը ձուլվում է բանավորի հետ: Սրտից է առաջ յեկել խոսքի հզորութեան հասկացողութիւնը: Անշուշտ սա տիրապետող դասակարգերի թերիան է, թերիան Յիլիզավետա թագուհու շրջանի ազնվականների, վորոնք նստած են բազկաթոռներին, սուրճ են խմում և ձայն տալիս. «Պալազա, Պալազա,

բեր»։ Յեւ շատ ընական ե, վոր հրամայող դասակարգերի մեջ համոզմունք ե կազմվում, թե խոսքը շատ հզոր ուժ ե, խոսքի ուժով հրամայում են աշխատավորներին և ստիպում, վոր կատարեն իրենց բոլոր ցանկությունները. ձայն կտամ՝ «Պալաշա», և նա խսկույն մոտ կվազի. պարզ ե, ուրեմն, վոր խոսքը շատ հզոր ե, Հիշեցեք, թե Մեֆիստոֆելը ինչպես ե բացատրում խոսքի նշանակութունը. «Խոսքերով գիտական վեճեր են տեղի ունենում, խոսքերից սխտեններ են դոյանում» և այլն։ Խոսքը կարող ուժ ե, և այս հասկացողություն և այլն։ Խոսքը կարող ուժ ե, և այս հասկացողություն նեց առաջ ե գալիս հասարակական պրոցեսների բանավոր ըմբռնումը, վոր չափազանց հատուկ ե տիրապետող դասակարգին, վորովհետև նա հիմնվում ե խոսքի ուժին և խոսքին մոգական ուժ ե վերադրում, և իրոք, հին ժամանակները խոսքը վայրենիների համար մոգական նշանակութուն ե ունեցել։

Ուրիշ հոգեբանությամբ ե ապրում աշխատավորը։ Նույն յեկիզավետինյան կալվածատիրոջ խոհարարը իմանում ե, թե վորքան ել կուզես հրամայիք հնդուհավին՝ «Մորթվիր, տապալվիր», նա չի տապալվի, այդ գործողությունը չի կատարվի։ Դերձակը մահուդի կըտորին ինչքան ել ասի. «Կարվի», նա չի կարվի, շոր չի դառնա։ Կարելու համար պետք ե վերցնենք մահուդը, կտրենք, ձևենք, կարենք և այլն։ Աշխատավոր մարդը, անկախ այն հանգամանքից, մանր բուրժուա յե թե պրոլետար, ակամա ներշնչվում ե հասարակական պրոցեսների մատերիալիստական հասկացողությունով և ասում ե, թե խոսելուց վոչինչ չի դուրս գա, և իզուր ե լեզվով տակից-գլխից դուրս տալը. մինչև մի բան չըշինես, վոչինչ չի կատարվի։ Տերը այդ չի տեսնում, վորովհետև նրա բանավոր հրամանով ծառայի կատա-

րած ամբողջ գործողությունը տեղի յե ունենում կուլիսի յետևը։ Ահա թե ինչու վոչ միայն պրոլետարիատը, այլ և նրա նախորդը՝ մանր աշխատավոր բուրժուազիան մատերիալիստական եր XVIII դարում, յերբ առաջ յեկավ Ֆրանսիական ենցիկլոպեդիստների մատերիալիզմը։ Հասկանալի յե, թե ինչու Դիդրոն, վորը մի դանակագործի վորդի յեր, այդ մատերիալիզմի հիմնադիրներից մեկն եր։

Ահա թե ինչու շատ պարզ ե, վոր այս դասակարգի մեջ պետք ե արմատանար մատերիալիստական աշխարհայացքը։

Ի՞նչ ավելացրեց այստեղ պրոլետարիատը. հատկապես ավելացրեց հեղափոխական տեսակետի դիալեկտիկան, վորովհետև ապրում եր մեքենաների արդյունաբերության աշխարհում և մոտիկից դիտում եր մեքենայի զանազան պրոցեսների դիալեկտիկ փոփոխությունները։ Դյուլզում պրոցեսները կրկնվում են տարեց-տարի, և գյուղացուն թվում ե, թե վոչինչ չի փոխվում, և ամեն ինչ մնում ե նույն դրությամբ։ Նույն կերպ ե մտածում և արհեստավորը, վոր սերնդից-սերունդ ավանդաբար աշխատում ե տարիներով. բայց բանվորները, նամանավանդ 25 տարով աշխատող բանվորները, տեսնում են մեքենաների յերեք, չորս սխտեմի հաջորդական փոփոխությունը։ Հին շարժիչները գործածությունից ընկնում են, յերևում են նորերը։ Առաջ մեքենաները ձեռքով եյին շարժվում, և այժմյան գործարաններում ջուլհակներից շատերը հիմա յել հիշում են այդ. հետո յել մեքենաները գոլորշիով եյին շարժվում, իսկ այժմ՝ էլեկտրականությամբ։ Վորոշ տեխնիկական և տնտեսական դրությունների իրար հաջորդող փոփոխությունները շատ արագ

կերպով անցնում են պրոլետարիատի աչքի առջևից, և այս հանգամանքի շնորհիվ (իհարկե, իմիջի ալոց և վոչ բացառապես) պրոլետարիատը հեշտությամբ կարող եր դիալեկտիկական տեսակետին անցնել: Յեւ վերովհետեւ գոյության կռիւը, կյանքի կռիւը, շահագործման դեմ մղվող պայքարը յերեք աշխատիձան լարվածության չի հասել, ինչպես այժմ կապիտալիստական հասարակության մեջ, ապա պարզ ե, վոր հենց այստեղ դիալեկտիկական մատերիալիզմի համար հողը շատ լավ եր մշակված, քան մի այլ տեղ:

Ահա թե ինչպես եմ հասկանում մարքսիզմը դպրոցում՝ ծավալված ձևով: Յես կարծում եմ, թե յերեխաների, նամանավանդ պատանիների հասկացողության համար անմատչելի և խորիմաստ բան չկա այստեղ: Ընդհակառակը, վերջացնելով ասելիքս, ուզում եմ ներողութիւն, ինչրեւ ձեզանից, վոր տարրական պատմութիւններով մի ամբողջ ժամ դժվար կացության մեջ դրի ձեզ, և վախենում եմ, վոր ինձնից հետո մի ուրիշը կբարձրանա այս ամբիոնը և կասի. «Չգիտեմ, թե ինչու Պակրովիկին այս մեկ ժամը խլեց մեզանից. այս ամենը մենք շատ լավ գիտեյինք»:



ՀՀ Ազգային գրադարան



NL0926357

169

1925թ.

1

2446



ԳԻՆԸ 15 ԿՈՊԵԿ

Հուլիս և սեպտեմբեր ծախվում են Պետհրատի գրախա-
նությունը.